ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 163 – Ա **28 ապրիլի 2020թ.**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 562500 /հինգ հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումար 1 կգ-ը 25 ՀՀ դրամով /22500կգ/ կաղամբ գնելու և Գեղարքունիքի մարզի Շողակաթ և Ճամբարակ համայնքների սոցիալապես անապահով անձանց տրամադրելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ՖՍՏՋ վարչությանը՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ: Համաձայն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի մարտի 23-ի <<Մասնագիտական թիմեր ստեղծելու մասին>> N 128-Ա որոշման հավելվածի 5-րդ կետի գումարը վճարել ՖՍՏՋ վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելսոն Սարգսյանի միջոցով:

28.04.2020

X

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ.Գավառ